Պարույր Սևակ

Խոստովանություն

Նորի՛ց մեջրս խոսեց ֆրանսիացին...
Եվ ակամա, նորի՞ց, ես չանսացի
Իմ պապերի ձայնին՝ խոհեմությա՛ն,
Հա՛յր Սուրբ Խոհեմության,
Որին պիտի
Հիմա խոստովանեմ իմ մեղքերը:
Հա՛յր Սուրբ, ես կուզեի կյանքի՞ս գնով
Ջնջել «զգույշ» բառը:
Մեծ մե՞ղք է սա:
Հա՛յր Սուրբ, ես կուզեի դարձնել կանոն
Անկանոնությունը:
Մեծ մե՞ղք է սա:
Կարելի չէ՞, Հա՛յր Սուրբ, որ ոտքերը,
Գեթ ոտքե՛րը լինեն ինքնագլուխ,
Գեթ ոտքե՛րը, Հա՛յր Սուրբ, ո՛չ գլուխը...
Թե՞ մեծ մեղք է դա էլ:
Եվ մահի չափ հոգնած մի կա՞ռճ պահի
Կարելի չէ՞ արդյոք «մարդ եմ» բառին
Չհագցընել ո՛չ մի նեղ ածական...
Թե՞ մեծ մեղք է դա էլ:
Հա՛յր Սուրբ, եթե մարդը հավատացյալը չէ,

Որտե՞ղ պիտի նա իր մեղքը խոստովանի:
Խո՛ս-տո՛-վա՛-նո՛ւ-թյա՛ն եմ կարոտ, Հա՛յր Սուրբ՝
Չներվելո՛ւ գնով
Եվ բանադրվելո՛ւ:
Որտե՞ղ խոստովանեմ,
Եվ ո՞ւմ խոստովանեմ,
Հա՛յր Սուրբ Խոհեմություն...
...Ո՛չ սուրբ և ո՛չ էլ հայր...

14.VII.1963թ.
Երևան